ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Արագածոտնի և Արմավիրի մարզային բաժին

ք. Աշտարակ,0204, էջմիածնի խճ. 65, հեռ.060713522
ելք N 07972630, «29» մարտ 2022թ.

«Ակբա բանկ»
ք.Երևան, Կենտրոն, Արամի 82-84

ՈՐՈՇՈՒՄ

Կատարողական վարույթն ավարտելու մասին

«29» մարտ 2022թ. **ք. Աշտարակ**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Արագածոտնի և Արմավիրի մարզային բաժին, ավագ հարկադիր կատարող արդարադատության մայոր Վարդան Մանուկյանս ուսումնասիրելով «19» մարտ 2022թ. հարուցված թիվ 08847060 կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

'Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան-ի կողմից «17» մարտ 2022թ. տրված թիվ ԱՐԱԴ/2924/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Գրետա Վարուժանի Համբարձումյանից,Հովհաննես Գրիգորի Ադյանից,Գայանե Վարուժանի Ադյանից համապարտության կարգով «Ակբա բանկ» ԲԲԸ-ի օգտին բռնագանձել 3816887 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ: թիվ 08846977 կատարողական վարույթով արգելանք է դրվել պարտապան Հովհաննես Ադյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք.Աշտարակ, Տիգրամ Մեծի 2/3 բնակարանի վրա:

Պարտապանին պատկանող բռնագանձման ենթակա այլ գույք չի հայտնաբերվել:

Առաջարկվում է Ձեզ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200 հոդվածի հիմքերով դիմել դատարան՝ պարտապանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքից նրա բաժինն առանձնացնելու և դրանց վրա բռնագանձում տարածելու պահանջով:'

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և **41.1.4.1** հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Ավարտել «19» մարտ 2022թ. հարուցված թիվ 08847060 կատարողական վարույթը:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ավագ հարկադիր կատարող արդարադատության մայոր Վարդան Մանուկյան

ë ï áñ ³ · ñáõÃÛáõÝ՝